

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին

տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին

Գ Լ ՈՒ Խ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում տեխնիկական անվտանգության ապահովման իրավական, տնտեսական, սոցիալական հիմքերը, տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը և կարգավորում է տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի նպատակը

Սույն օրենքի նպատակը տեխնիկական անվտանգության բնագավառում պետության ռազմավարության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է՝ ուղղված տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների շիջմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող, շահագործման նպատակով նախապատրաստվող, կոնսերվացվող, ապամոնտաժվող արտադրական վտանգավոր օբյեկտների վրա, բացառությամբ միջուկային և էներգատեղակայանքների, ռադիոակտիվ նյութերի վերամշակման, ջրային համակարգերի, ավիացիայի, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի, ինչպես նաև ռազմական նշանակության օբյեկտների:

(3-րդ հոդվածը լրաց. 10.04.08 ՀՕ-33-Ն, խմբ. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 4. Օրենքի հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

տեխնիկական անվտանգություն՝ արտադրական և սպասարկման ոլորտի օբյեկտներում տեխնածին վթարներից, արտադրական պատահարներից և դրանց հետևանքներից հասարակության և անհատի կենսականորեն առավելագույն պաշտպանվածության վիճակը:

տեխնածին վթար՝ արտադրության մեջ կիրառվող տեխնոլոգիական սարքավորումների, շենքերի, շինությունների ավերածություններ, չվերահսկվող պայթյուն և հրդեհ, վտանգավոր, վնասակար նյութերի արտանետումներ, որոնց հետևանքով վնաս է հասցվել մարդկանց առողջությանը, շրջակա միջավայրին, վնասվել կամ ոչնչացվել են նյութական միջոցներ:

տեխնիկական միջոցներ՝ տեխնոլոգիական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ մեքենաներ, գործիքներ, պաշտպանական միջոցներ, չափիչ ստուգիչ սարքեր, ավտոմատացման միջոցներ, տեխնիկական սարքավորումներ, ջրային լողամիջոցներ:

արտադրական պատահար՝ արտադրական վտանգավոր օբյեկտներում օգտագործվող տեխնիկական միջոցների խափանում կամ վնասում, տեխնոլոգիական պրոցեսի ռեժիմից շեղում, տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջների խախտումներ, որոնք կարող են ստեղծել տեխնածին վթարի սպառնալիք:

վթարի շիջման գնահատում՝ գործընթաց, որի նպատակն է բացահայտել, վերլուծել և գնահատել արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնածին վթարի առաջացման հավանականության պայմանները, դրանց ընթացքի վրա ազդող գործոնների նկարագրությունը, վթարի մասշտաբները, մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության ծանրության աստիճանը:

միջավայրի պաշտպանվածություն՝ վթարների հետևանքներից մարդկանց կյանքի և առողջության, բնական միջավայրի պաշտպանություն, ինչպես նաև պետության, այլ սեփականատերերի և քաղաքացիների գույքի պահպանության նպատակով իրավական, կազմակերպական և ինժեներատեխնիկական միջոցառումների իրականացում:

տեխնիկական անվտանգության վկայագիր՝ արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի կողմից հաստատված փաստաթուղթ, որի մեջ արտացոլվում և ամփոփվում են տվյալներ արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնածին վթարների հավանականության, դրանց բնույթի ու մասշտաբների, աշխատողների, շրջակա բնակչության և միջավայրի վրա վտանգավոր գործոնների հնարավոր ազդեցության, դրանց կանխարգելման և վերացման համար նախատեսված միջոցառումների, ինչպես նաև միջավայրի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտը գոտիավորող տարածքների մասին:

տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ գործունեություն, որի նպատակն է ուսումնասիրել և տալ եզրակացություն արտադրական վտանգավոր օբյեկտի շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերի, տեխնիկական անվտանգության վկայագրի, շահագործվող կամ գործարկման ենթակա արտադրական վտանգավոր օբյեկտների շենքերի, շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և տեխնիկական միջոցների՝ տեխնիկական անվտանգության

ուղորտի օրենսդրության պահանջներին համապատասխանության մասին.

փորձագիտական եզրակացություն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում կազմվող փաստաթուղթ, որի մեջ ամփոփվում են տեխնիկական անվտանգության ուղորտի օրենսդրության պահանջների պահպանման վիճակը բնութագրող վերլուծություններ, հետևություններ և եզրահանգումներ.

տեխնիկական քննություն՝ գործառույթ, որի ընթացքում ուսումնասիրվում և փաստաթղթով ձևակերպվում են հիմնավորումներ և եզրահանգումներ տեղի ունեցած վթարների և (կամ) արտադրական դժբախտ դեպքերի տեխնածին բնույթ կրող պատճառների և հանգամանքների վերաբերյալ.

լիազոր մարմին՝ սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած տեխնիկական անվտանգության ապահովման ուղորտի պետական կառավարման մարմին.

տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն՝ սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության ստեղծած պետական ոչ առևտրային կազմակերպություն.

արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բնորոշմանը համապատասխանող օբյեկտ փաստացի շահագործող, շահագործման նպատակով նախապատրաստող ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, այդ թվում՝ օտարերկրյա, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ անկախ տվյալ օբյեկտի նկատմամբ առկա իրավունքի բնույթից.

շահագործման նպատակով նախապատրաստվող արտադրական վտանգավոր օբյեկտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված նախագծային փաստաթղթերի վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացություն ստացած օբյեկտ:

(4-րդ հոդվածը խմբ., լրաց. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 5. Տեխնիկական անվտանգության ուղորտի օրենսդրությունը

1. Տեխնիկական անվտանգության ուղորտի օրենսդրությունը ներառում է սույն օրենքը, տեխնիկական անվտանգության հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտեր, այդ թվում՝ տեխնիկական կանոնակարգեր:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Գ Լ ՈՒ Խ 2

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ

Հոդված 6. Արտադրական օբյեկտների ըստ վտանգավորության դասակարգման բնութագրիչները

1. Սույն օրենքի իմաստով արտադրական վտանգավոր օբյեկտ են համարվում՝

ա) արտադրություններ կամ առանձին տեղամասեր, արտադրամասեր, արտադրական հրապարակներ, պահեստարաններ, տեղակայանքներ, տեխնոլոգիական սարքավորումներ կամ ցանկացած այլ օբյեկտ, որտեղ՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած սահմանաքանակները գերազանցող չափերով արտադրվում, վերամշակվում, պահվում, փոխադրվում, օգտագործվում կամ ստացվում են հետևյալ հատկանիշներով բնութագրվող վնասակար նյութերը՝ դյուրավառ նյութեր, որոնք զագային վիճակում, նորմալ ճնշման պայմաններում օդի հետ խառնվելու դեպքում դառնում են բոցավառ, և որոնք եռման ջերմաստիճանը նորմալ ճնշման դեպքում հավասար է 20⁰ C-ի կամ դրանից ցածր է, օքսիդացող նյութեր, որոնք օժանդակում են այրմանը, հարուցում են կրակի առաջացում կամ նպաստում են այլ նյութերի բոցավառմանը օքսիդավերականգնման էկզոթերմի ռեակցիաների հետևանքով, այրվող նյութեր՝ հեղուկներ, գազեր, փոշիներ, որոնք ունեն ինքնաբռնկվելու հատկություններ, ինչպես նաև կարող են բռնկվել կրակի աղբյուրից, պայթյունավտանգ նյութեր, որոնք կարող են պայթել բոցի ազդեցությամբ կամ ցնցումների և շփման նկատմամբ դրսևորել ավելի զգայունություն, քան երկնիքաբեմնազուլը, թունավոր նյութեր, որոնք ազդելով կենդանի օրգանիզմների վրա, կարող են դառնալ հիվանդության կամ մահվան պատճառ, շրջակա բնական միջավայրի համար վտանգ ներկայացնող նյութեր, որոնք ջրային միջավայրում ձեռք են բերում սուր թունավոր հատկություններ.

բ) կիրառվում են 0,07 և ավելի մեգապասկալ ճնշման տակ աշխատող սարքավորումներ, ջրի՝ մինչև 115⁰ C (60 կՎտ և ավելի հզորության) և 115⁰ C-ից բարձր ջերմաստիճանի տակ աշխատող ջերմային կայանքներ,

գ) իրականացվում են հանքարդյունահանման, հորապայթեցման աշխատանքներ կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանքահարստացման ուղղությամբ,

դ) իրականացվում են թունելաշինական աշխատանքներ կամ ցանկացած այլ աշխատանք ստորերկրյա պայմաններում,

ե) ստացվում են մետաղների հալույթներ.

2) շարժասանդղոցներ, ճոպանուղիներ, կարուսեյներ, ֆունիկլյորներ, ամբարձիչ կռունկներ, մեկ տոննա և ավելի բեռնաբարձությամբ ամբարձիչ սարքավորումներ և մեխանիզմներ.

3) վերելակներ, եթե դրանք տեղադրված են հանրային նշանակության կառույցներում, այդ թվում՝ արտադրական շինություններում, բազմաբնակարանային շենքերում, ընդհանուր օգտագործման համար նախատեսված այլ վայրերում, բացառությամբ 250 կգ ու փոքր բեռնատարողությամբ վերելակների.

4) նավթամթերքների, հեղուկ գազի, բնական (սեղմված) գազի, հաստատուն և շարժական լցավորման կայաններ, գազազանաանոթային սարքավորումներ, տեխնոլոգիական նպատակներով գազ օգտագործող օբյեկտներ, գազապահեստարաններ.

5) ջրային լողամիջոցներ, բացառությամբ ջրային հեծանիվների և առանց շարժիչի նավակների, այդ թվում՝ փչյովի:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված արտադրական վտանգավոր օբյեկտների դասակարգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(6-րդ հոդվածը փոփ. 10.04.08 ՀՕ-33-Ն, լրաց. 15.11.10 ՀՕ-174-Ն, խմբ., 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 7. Գազի ներտնային համակարգը

Գազի ներտնային համակարգի անվտանգ շահագործման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 8. Տեխնիկական անվտանգության պահանջները

1. Տեխնիկական անվտանգության պահանջները տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությամբ, ինչպես նաև տեխնիկական հրահանգներով և անձնագրերով արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ սահմանված նորմերի, կանոնների, պայմանների, արգելքների, սահմանափակումների և կատարման համար պարտադիր այլ պահանջների ամբողջությունն է:

2. Տեխնիկական անվտանգության պահանջները պետք է համապատասխանեն արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, բնակչության հիգիենիկ և սանիտարահամաձարակային բարեկեցության ապահովման, շրջակա միջավայրի պահպանման, բնապահպանական անվտանգության, հրդեհային անվտանգության և շինարարական նորմերի, ինչպես նաև գործող ստանդարտների պահանջներին:

3. Տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման և կիրառման պարտավորությունը կրում են արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձինք:

(8-րդ հոդվածը լրաց. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 9. Տեխնիկական անվտանգության պահանջներն արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի նկատմամբ

1. Արտադրական վտանգավոր օբյեկտի կառուցման, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, ինչպես նաև կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության:

Առանց տեխնիկական անվտանգության դրական փորձագիտական եզրակացության՝ նախագծային փաստաթղթերի հաստատումն արգելվում է:

2. Արտադրական վտանգավոր օբյեկտի կառուցումը, շահագործումը, ընդլայնումը, վերակառուցումը, տեխնիկական վերազինումը, կոնսերվացումը, ապամոնտաժումը կարող են իրականացվել միայն նախագծային փաստաթղթերի հաստատումից հետո:

Սույն մասում նշված աշխատանքների կատարման ընթացքում սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերից ցանկացած շեղում արգելվում է:

3. Նախքան արտադրական վտանգավոր օբյեկտի գործարկումը (վերագործարկումը) փորձագիտական եզրակացությամբ պետք է հավաստված լինի օբյեկտի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին:

Արգելվում է առանց տեխնիկական անվտանգության դրական փորձագիտական եզրակացության սկսել արտադրական վտանգավոր օբյեկտի գործարկումը (վերագործարկումը):

Գ Լ ՈՒ Խ 3

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հոդված 10. Տեխնածին վթարների, արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումը և տեխնիկական քննությունը

1. Հաշվառման և տեխնիկական քննության ենթակա են արտադրական վտանգավոր օբյեկտում տեղի ունեցած՝

ա) տեխնածին վթարի յուրաքանչյուր դեպք.

բ) մահացու կամ ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերը:

2. Սույն հոդվածով նախատեսված տեխնիկական քննության և հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեխնածին վթարների և արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումն իրականացնում է լիազոր մարմինը:

3. Տեխնիկական քննություն կարող են իրականացնել Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը և հավատարմագրված անձինք: Տեխնիկական քննություն չի կարող իրականացնել սույն մասում նշված այն կազմակերպությունը, որը տեխնածին վթարին կամ արտադրական դժբախտ դեպքին նախորդող 1 տարվա ընթացքում դրական փորձագիտական եզրակացություն է տվել տվյալ օբյեկտի վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարության նախատեսած առանձին դեպքերում տեխնիկական քննություն իրականացնում է լիազոր մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովը:

(10-րդ հոդվածը լրաց. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 11. Տեխնիկական անվտանգության փորձաքննությունը

1. Տեխնիկական անվտանգության փորձաքննություն կարող են իրականացնել Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հավատարմագրված անձ):»:

2. Տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում՝ պահպանելով տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությամբ սահմանված պայմանների կատարումը:

3. Տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն: Փորձագետը (փորձագիտական խումբը) պատասխանատվություն է կրում իր կազմած փորձագիտական եզրակացության հավաստիության համար:

4. Մինչև փորձագիտական եզրակացություն կազմելը փորձագետի և արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի միջև կարող է կազմվել տեխնիկական անվտանգության փորձաքննության ընթացքում բացահայտված խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր այն դեպքում, եթե բացահայտված թերություններն իրենց բնույթով տվյալ պահին տեխնածին վթարի սպառնալիք չեն առաջացնում:

Սույն մասով նախատեսված դեպքում փորձագիտական եզրակացությունը կազմվում է միջոցառումների ծրագրով սահմանված ժամկետի ավարտին:

5. Փորձագիտական եզրակացությունն ստորագրվում է տվյալ փորձաքննությանը մասնակցած փորձագետի (փորձագիտական խմբի) և հաստատվում Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կամ

հավատարմագրված անձի ղեկավարի կողմից:

Հավատարմագրված անձը պարտավոր է իր կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու դեպքում փորձագիտական եզրակացության մեկ օրինակը ներկայացնել Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն՝ այն սահմանված կարգով հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ վթարի սպառնալիք արձանագրելու դեպքում՝ անմիջապես:

6. Շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ: Արտադրական վտանգավոր օբյեկտների առանձին խմբերի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել փորձաքննության իրականացման պարբերականության ավելի երկար ժամկետներ:

7. Արտադրական պատահարի կամ տեխնածին վթարի դեպքում արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է փորձաքննության անկախ սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված ժամկետից:

8. Տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է՝

ա) նախագծային փաստաթղթերի նկատմամբ՝ նախագծման փուլի ավարտին, մինչև նախագծային փաստաթղթերի հաստատման պահը.

բ) գործարկվող (վերագործարկվող) արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ նախքան գործարկման (վերագործարկման) աշխատանքները սկսելը.

գ) շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ՝ սույն օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (այսուհետ՝ ռեեստր) գրանցվելուց հետո:

9. Տեխնիկական փորձաքննության իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(11-րդ հոդվածը խմբ., լրաց. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 12. Արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը

1. Արտադրական վտանգավոր օբյեկտները հաշվառելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները գրառելու, վերլուծելու նպատակով լիազոր մարմինը վարում է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը:

2. Ռեեստրում գրանցման ենթակա է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող յուրաքանչյուր արտադրական վտանգավոր օբյեկտ:

3. Ռեեստրում գրառվում են տեղեկություններ՝

ա) արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի վերաբերյալ՝ անվանումը (անունը՝ անհատ ձեռնարկատիրոջ համար), պետական գրանցման տվյալները.

բ) արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկատեխնոլոգիական տվյալների մասին.

գ) արտադրական վտանգավոր օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունների ներկայացման մասին.

դ) արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքների մասին.

ե) տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայության մասին.

զ) արտադրական վտանգավոր օբյեկտի ընդլայնման, վերակառուցման, վերազինման, կոնսերվացման, գտնվելու վայրի կամ շահագործող անձի փոփոխության մասին.

է) սույն օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված օբյեկտների ապահովագրությունների մասին:

4. Ռեեստրում գրանցման նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը լիազոր մարմին է ներկայացնում դիմում՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա) պետական գրանցման վկայականի պատճենը, իրավաբանական անձի համար՝ նաև կանոնադրության պատճենը.

բ) արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագիրը՝ կցելով դրա վերաբերյալ սույն օրենքով սահմանված փորձագիտական եզրակացությունը.

գ) սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված փորձագիտական եզրակացությունը (եզրակացությունները), եթե արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը հաստատվել են, կամ արտադրական վտանգավոր օբյեկտի գործարկումը (վերագործարկումը) կատարվել է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո.

դ) տեղեկություններ արտադրական վտանգավոր օբյեկտի գտնվելու վայրի մասին.

ե) տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ մշտական հսկողություն իրականացնող հատուկ պատասխանատու ծառայությունների մասին:

5. Լիազոր մարմինը սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված փաստաթղթեր ստանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, գրանցում է արտադրական վտանգավոր օբյեկտը և տալիս վկայական, եթե դիմումի մերժման հիմքեր չեն հայտնաբերվել:

6. Արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը մերժվում է, եթե՝

ա) ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված.

բ) բացակայում է սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված փաստաթղթերից թեկուզ մեկը.

գ) գրանցման ներկայացված օբյեկտը չի հանդիսանում արտադրական վտանգավոր օբյեկտ:

6.1. Արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը մերժելու մասին տրվում է գրավոր տեղեկանք, որտեղ նշվում են մերժման համար հիմք համարվող հանգամանքները՝ հղում կատարելով տեխնիկական անվտանգության ոլորտի իրավական ակտերին և դրանց համապատասխան նորմերին:

7. Արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը դադարեցվում է դրա ապամոնտաժման հետևանքով, եթե առկա է ապամոնտաժման վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացությունը:

8. Ապամոնտաժման ենթակա արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը դադարեցնելու նպատակով այն շահագործող անձը դիմում է ներկայացնում լիազոր մարմին՝ կցելով ապամոնտաժման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով կազմված փորձագիտական եզրակացությունը:

Լիազոր մարմինը սույն մասով նախատեսված դիմումի հիման վրա կատարում է համապատասխան գրառում ռեեստրում: Ռեեստրում տվյալ արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը դադարեցվում է ապամոնտաժման փաստը հաստատվելուց հետո:

(12-րդ հոդվածը փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 13. Արտադրական վտանգավոր օբյեկտի վթարի ռիսկի վերլուծումը և գնահատումը

1. Արտադրական վտանգավոր օբյեկտներն ըստ վտանգավորության աստիճանի դասակարգելու նպատակով իրականացվում է արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնածին վթարի ռիսկի (այսուհետ՝ ռիսկ) վերլուծություն և գնահատում:

2. Ռիսկի վերլուծությունը և գնահատումը տեխնիկական անվտանգության ապահովման բաղադրիչներից են, որոնք ենթադրում են տեխնիկական տեղեկատվության ամբողջական օգտագործում՝ տեխնածին վթարների կանխատեսման, վտանգավորության նույնականացման համար:

3. Ռիսկի վերլուծությունը և գնահատումն իրականացվում են ըստ հետևյալ տարատեսակների՝

ա) տեխնիկական ռիսկ, որի պատճառ կարող են հանդիսանալ տեխնիկական միջոցների անսարքությունը, շեղումը տեխնիկական կանոնակարգի պահանջներից:

բ) անհատական ռիսկ՝ առանձին անհատների կամ մարդկանց խմբի ոչ ճիշտ գործողությունները, ինչը կարող է հանգեցնել արտադրական վթարի:

գ) տարածքային ռիսկ՝ հնարավոր վթարների ընդգրկման գոտին և տարածքային սահմանները:

դ) սոցիալական ռիսկ՝ բնորոշում է հնարավոր վթարի մասշտաբները և հասցվող վնասի չափերը:

ե) կոլեկտիվ ռիսկ՝ բնորոշում է վթարի հետևանքով տուժվող մարդկանց քանակը:

զ) սպասվելիք վնասի ռիսկ՝ բնորոշում է վթարի հետևանքով առաջացող նյութական կորուստները:

է) այլ հնարավոր ռիսկեր:

4. Արտադրական վտանգավոր օբյեկտում վթարի ռիսկի աստիճանը և վտանգի մեծությունը գնահատվում են դրանց հավանականության, հաճախականության և հնարավոր հետևանքների ծանրության վերլուծությամբ և համադրմամբ:

5. Ռիսկի վերլուծության և գնահատման արդյունքները պետք է օգտագործվեն արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման, անվտանգության փորձաքննության իրականացման, օբյեկտի ապահովագրման, տնտեսական և բնապահպանական գործոնների ներագդեցության բացահայտման գործընթացների ժամանակ:

Հոդված 14. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի կողմից ներկայացվող տեղեկատվությունը

1. Եթե նախորդ տարվա ընթացքում արտադրական վտանգավոր օբյեկտում տեղի են ունեցել արտադրական պատահարներ կամ տեխնածին վթարներ, ապա արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը լիազոր մարմին է ներկայացնում սահմանված ձևով տեղեկատվություն՝ իրականացված միջոցառումների և դրանց արդյունքում արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման և կիրառման վիճակի վերաբերյալ:

2. Սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը ներառում է տեղեկություններ՝

ա) տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նպատակով իրականացված միջոցառումների, այդ թվում՝ սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայության կողմից իրականացված տեխնիկական գնումների և դրանց արդյունքների մասին:

բ) տեղի ունեցած արտադրական պատահարների և տեխնածին վթարների վերաբերյալ:

գ) արտադրական պատահարների և տեխնածին վթարների հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

3. Սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը ստորագրում են արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի և սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայության ղեկավարները:

4. Տեղեկատվությունները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ցանկացած եղանակով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է առանձին դասակարգման վտանգավոր օբյեկտների համար սահմանել տեղեկատվության ներկայացման այլ պարբերականություն՝ հիմք ընդունելով վտանգավորության աստիճանը:

(14-րդ հոդվածը խմբ. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 15. Տեխնիկական անվտանգության կանոնների և նորմերի խախտման դեպքում կիրառվող կարգադրագրերը

1. Կարգադրագիրը լիազոր մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով և լիազորությունների սահմաններում ընդունված իրավական ակտ է, որն ուղղված է՝

ա) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման արգելմանը, եթե այն կամ դրանում օգտագործվող տեխնիկական միջոցները, տեխնոլոգիական սարքավորումները, շենքերն ու շինությունները չեն համապատասխանում տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին, արտադրական վտանգավոր օբյեկտը սահմանված կարգով չի անցել տեխնիկական անվտանգության փորձաքննություն կամ չի գրանցվել ռեեստրում:

բ) արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործման արգելմանը, եթե այն չի համապատասխանում տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին կամ սահմանված կարգով չի անցել տեխնիկական անվտանգության փորձաքննություն:

2. Կարգադրագրով սահմանվում է դրա կատարման ժամկետը, որը կարող է փոփոխվել արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի համապատասխան հիմնավորման դեպքում:

3. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում դրա կատարման մասին տեղյակ պահել կարգադրագիրն արձակած լիազոր մարմնին:

4. Կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում կարգադրագիրն արձակած լիազոր մարմնին տեղյակ չպահելը համարվում է խախտում, որն առաջացնում է պատասխանատվություն՝ սույն օրենքով սահմանված կարգով:

5. Կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացվում են կարգադրագիրն արձակած լիազոր մարմնի կողմից՝ արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի դիմումով, տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին արտադրական վտանգավոր օբյեկտի անհամապատասխանության վերացման դեպքում:

6. Սույն հոդվածով նախատեսված կարգադրագրերը լիազոր մարմնի կողմից տրվում են, ինչպես նաև

կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացվում են հավատարմագրված անձի կամ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հաստատված փորձագիտական եզրակացության հիման վրա:

7. Կարգադրագիրը կարող է բողոքարկվել դատական կարգով:

8. Կարգադրագրի բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

9. Սույն հոդվածով նախատեսված միջոցառումներն իրականացվում են «Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(15-րդ հոդվածը խմբ. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԿՂՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոդված 16. Տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը

1. Տեխնիկական անվտանգության ապահովման համակարգի օղակներն են՝

ա) լիազոր մարմինը.

բ) Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը.

գ) հավատարմագրված անձինք.

դ) արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձինք, այդ թվում՝ սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությունները:

2. Տեխնիկական անվտանգության ապահովման համակարգի յուրաքանչյուր օղակ պատասխանատու է սույն օրենքով սահմանված իրավասությունների, լիազորությունների և պարտավորությունների պատշաճ կատարման համար:

Հոդված 17. Լիազոր մարմնի իրավասությունները

1. Լիազոր մարմնի իրավասություններն են՝

ա) տեխնիկական անվտանգության ապահովման պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

բ) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառի պետական ծրագրերի մշակումը և ծրագրերի կատարման ապահովումը.

գ) տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարություն և առաջարկություններ ներկայացնելը.

դ) համագործակցությունը տեխնիկական անվտանգության բնագավառում միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման այլ մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, արհեստակցական միությունների ընտրովի մարմինների հետ.

ե) հավատարմագրված անձանց, տեխնածին վթարների, մահացու և ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումը, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարումը.

զ) արտադրական վտանգավոր օբյեկտի ռիսկի վերլուծումը և գնահատումը՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման նպատակով.

է) օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացումը համապատասխան առանձնացված ստորաբաժանման միջոցով.

ը) տեխնիկական անվտանգության վկայագրին ներկայացվող պահանջների սահմանումը.

թ) սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության ձևերի սահմանումը.

ժ) սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված կարգադրագրի արձակումը.

ի) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վարչական վարույթի իրականացումը.

իա) աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքների անվտանգության գծով տեսչական և վերահսկողական գործառույթներով օժտված պետական մարմինների կամ այլ կառույցների հետ համագործակցությունը.

իբ) տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում իրավական ակտերի ընդունումը.

իգ) սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը.

իդ) սույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վկայականի ձևի հաստատումը.

իե) կարգադրագրերի ձևերի հաստատումը.

իզ) ռեեստրի ձևի և վարման կարգի, ինչպես նաև հավատարմագրված անձանց հաշվառման կարգի հաստատումը.

իէ) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

(17-րդ հոդվածը խմբ. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 18. Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի լիազորությունները

Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի լիազորություններն են՝

ա) տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշակումը.

բ) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-32-Ն)*

գ) ուսումնամեթոդական ծրագրերի մշակումը, ոլորտի մասնագետների, փորձագետների, տնտեսության մեջ աշխատող ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերի ուսուցման և որակավորման գծով աշխատանքների կազմակերպումը.

դ) միջպետական ծրագրերի և տեխնիկական նախագծերի մշակմանը, իրագործմանը գիտահետազոտական աշխատանքների համատեղ անցկացմանը մասնակցությունը.

ե) տեխնիկական անվտանգության բնագավառում նոր գիտական ուղղությունների, գիտափորձերի մշակումը.

զ) արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ սույն օրենքով սահմանված տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացումը և համապատասխան փորձագիտական եզրակացության տրամադրումը.

է) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-32-Ն)*

ը) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-32-Ն)*

թ) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-32-Ն)*

ժ) սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված տեխնիկական քննության և հաշվառման իրականացումը:

ժա) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-32-Ն)*

ժբ) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, քաղաքացիներին տեխնիկական անվտանգությանը առնչվող հարցերով տեղեկատվությամբ ապահովումը, այդ թվում նաև զանգվածային լրատվության միջոցներով:

ժգ) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.12.10 ՀՕ-32-Ն)*

ժդ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:
(18-րդ հոդվածը փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 19. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձանց պարտականությունները տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում

1. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը պարտավոր է՝

ա) հաստատել արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագիրը՝ մշակելով այն վկայագրին ներկայացվող պահանջներին համապատասխան:

բ) սահմանել տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ մշտական վերահսկողություն, այդ թվում՝ ստեղծել պարբերական տեխնիկական զննումներ իրականացնող հատուկ պատասխանատու կառույց կամ նշանակել հատուկ պատասխանատու անձ կամ այդ գործառույթների իրականացումը հանձնարարել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ տեխնիկական անվտանգության ծառայություն):

գ) պահպանել տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջները:

դ) արտադրական պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ամբողջ ընթացքում ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների անվտանգության գոտու տարածքների պարբերական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում:

ե) մշակել և իրականացնել միջոցառումների ծրագիր տեխնածին վթարների հավանականության նվազեցման ուղղությամբ:

զ) ստեղծել դիտարկման, ազդարարման, կապի միջոցների և տեխնիկական այլ համակարգեր՝ տեխնածին վթարների և արտադրական պատահարների դեպքերում դրանց կիրառման համար:

է) աջակցել տեխնիկական անվտանգության համակարգի այլ օղակներին՝ տեխնածին վթարների և դժբախտ դեպքերի պատճառների և հանգամանքների բացահայտման գործում:

ը) տեխնիկական անվտանգության համակարգի այլ օղակների պաշտոնատար անձանց արտադրական վտանգավոր օբյեկտներում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս տրամադրել պաշտպանության անհրաժեշտ միջոցներ:

թ) ապահովել արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վիճակը բնութագրող տեղեկատվության հավաստիությունը:

ժ) արտադրական պատահարների և տեխնածին վթարների դեպքում անհապաղ ձեռնարկել տեխնիկական անվտանգության վկայագրով նախատեսված միջոցառումները՝ միաժամանակ տեղեկացնելով լիազոր մարմնին:

ժա) արտադրական վտանգավոր օբյեկտի ընդլայնման, վերակառուցման, վերազինման, կոնսերվացման, գտնվելու վայրի կամ շահագործող անձի փոփոխության դեպքում այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել լիազոր մարմնին:

ժբ) սույն օրենքով նախատեսված դեպքերում ապահովել տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացումը:

ժգ) դադարեցնել արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը, եթե փորձագիտական եզրակացության մեջ արձանագրվել է տեխնածին վթարի սպառնալիքը:

ժդ) տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ներկայացնել գրանցման ռեեստրում:

2. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի՝ սույն հոդվածով նախատեսված պարտավորությունները դադարում են ռեեստրում արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը դադարեցնելու պահից:

(19-րդ հոդվածը փոփ. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 20. Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների պարտադիր ապահովագրումը

1. Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտ շահագործող անձը պարտավոր է իր գործունեության ամբողջ ժամանակահատվածում, ելնելով այն հանգամանքից, որ իր կողմից կատարվող աշխատանքները հանդիսանում են գործունեության առավել վտանգի աղբյուր, պարտադիր կարգով ապահովագրել պատասխանատվության հետևյալ ռիսկերը՝

ա) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում և դրա հետևանքով իր աշխատողների կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասները:

բ) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում և դրա հետևանքով իր աշխատողների, ինչպես նաև աշխատանքների հետ անմիջականորեն չկապված, սակայն այդ աշխատանքների արդյունքում քաղաքացիների կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասները:

գ) արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում և դրա հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասները:

Ապահովագրության գումարների նվազագույն չափը, ըստ սույն մասով սահմանված ռիսկի առանձին տեսակների, որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Սույն հոդվածով սահմանված պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 21. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթների խախտման համար

1. Սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետով նախատեսված կարգադրագիրը չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված կարգադրագիրը չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Սույն օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4. Արտադրական վտանգավոր օբյեկտի ընդլայնման, վերակառուցման, վերազինման, գտնվելու վայրի կամ շահագործող անձի փոփոխության դեպքում լիազոր մարմնին չտեղեկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

5. Սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

6. Փորձագետի (փորձագիտական խմբի) կողմից ոչ հավաստի փորձագիտական եզրակացություն կազմելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հարյուրապատիկի չափով:

7. Սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվությունը չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

8. Սույն օրենքի պահանջների խախտումները, որոնք հանգեցրել են խոշոր տեխնածին աղետների և վթարների, առաջացնում են քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

(21-րդ հոդվածը փոփ. 22.12.10 ՀՕ-32-Ն)

Հոդված 22. Եզրափակիչ դրույթներ

1. Մինչև 2006 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ստեղծում է Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն և հաստատում լիազոր մարմին.

բ) հաստատում է սույն օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված վնասակար նյութերի սահմանաքանակները.

գ) սահմանում է տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման և հաշվառման կարգը:

2. Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձինք պարտավոր են մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը արտադրական վտանգավոր օբյեկտները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացնել գրանցման ռեեստրում և գրանցման պահից մեկ տարվա ընթացքում ապահովել շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացումը:

Հոդված 23. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ՝

ա) սույն օրենքի 20-րդ հոդվածի առաջին մասի, որն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հունվարի 1-ից,

բ) սույն օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**Հայաստանի
Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

2005 թ. նոյեմբերի 19
Երևան
ՀՕ-204-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի ապրիլի 10-ին

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 14-ի ՀՕ-204-Ն օրենքի 3-րդ հոդվածը «ռադիոակտիվ նյութերի վերամշակման» բառերից հետո լրացնել «ջրային համակարգերի» բառերով:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2008 թ. մայիսի 5
Երևան
ՀՕ-33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի նոյեմբերի 15-ին

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետը «լողամիջոցներ» բառից հետո լրացնել «, ձյունազնացներ և մոտոամենազնացներ (քվադրոցիկներ)» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2010 թ. դեկտեմբերի 8
Երևան
ՀՕ-174-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող, շահագործման նպատակով նախապատրաստվող, կոնսերվացվող, ապամոնտաժվող արտադրական վտանգավոր օբյեկտների վրա, բացառությամբ միջուկային և էներգատեղակայանքների, ռադիոակտիվ նյութերի վերամշակման, ջրային համակարգերի, ավիացիայի,

ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի, ինչպես նաև ռազմական նշանակության օբյեկտների»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բնորոշմանը համապատասխանող օբյեկտ փաստացի շահագործող, շահագործման նպատակով նախապատրաստող ֆիզիկական անձ կամ կազմակերպություն, այդ թվում՝ օտարերկրյա, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ անկախ տվյալ օբյեկտի նկատմամբ առկա իրավունքի բնույթից.»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«շահագործման նպատակով նախապատրաստվող արտադրական վտանգավոր օբյեկտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված նախագծային փաստաթղթերի վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացություն ստացած օբյեկտ»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Արտադրական օբյեկտների ըստ վտանգավորության դասակարգման բնութագրիչները

1. Սույն օրենքի իմաստով արտադրական վտանգավոր օբյեկտ են համարվում՝

1) արտադրություններ կամ առանձին տեղամասեր, արտադրամասեր, արտադրական հրապարակներ, պահեստարաններ, տեղակայանքներ, տեխնոլոգիական սարքավորումներ կամ ցանկացած այլ օբյեկտ, որտեղ՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած սահմանաքանակները գերազանցող չափերով արտադրվում, վերամշակվում, պահվում, փոխադրվում, օգտագործվում կամ ստացվում են հետևյալ հատկանիշներով բնութագրվող վնասակար նյութերը՝ դյուրավառ նյութեր, որոնք զագային վիճակում, նորմալ ճնշման պայմաններում օդի հետ խառնվելու դեպքում դառնում են բոցավառ, և որոնց եռման ջերմաստիճանը նորմալ ճնշման դեպքում հավասար է 20°C-ի կամ դրանից ցածր է, օքսիդացող նյութեր, որոնք օժանդակում են այրմանը, հարուցում են կրակի առաջացում կամ նպաստում են այլ նյութերի բոցավառմանը օքսիդավերականգնման էկզոթերմի ռեակցիաների հետևանքով, այրվող նյութեր՝ հեղուկներ, գազեր, փոշիներ, որոնք ունեն ինքնաբռնկվելու հատկություններ, ինչպես նաև կարող են բռնկվել կրակի աղբյուրից, պայթյունավտանգ նյութեր, որոնք կարող են պայթել բոցի ազդեցությամբ կամ ցնցումների և շփման նկատմամբ դրսևորել ավելի զգայունություն, քան երկնիտարբենզոլը, թունավոր նյութեր, որոնք ազդելով կենդանի օրգանիզմների վրա, կարող են դառնալ հիվանդության կամ մահվան պատճառ, շրջակա բնական միջավայրի համար վտանգ ներկայացնող նյութեր, որոնք ջրային միջավայրում ձեռք են բերում սուր թունավոր հատկություններ,

բ) կիրառվում են 0,07 և ավելի մեգապասկալ ճնշման տակ աշխատող սարքավորումներ, ջրի՝ մինչև 115°C (60 կՎտ և ավելի հզորության) և 115°C-ից բարձր ջերմաստիճանի տակ աշխատող ջերմային կայանքներ,

գ) իրականացվում են հանքարդյունահանման, հորապայթեցման աշխատանքներ կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանքահարստացման ուղղությամբ,

դ) իրականացվում են թունելաշինական աշխատանքներ կամ ցանկացած այլ աշխատանք ստորերկրյա պայմաններում,

ե) ստացվում են մետաղների հալույթներ.

2) շարժասանդուղքներ, ճուպանուղիներ, կարուսեյներ, ֆունիկուլյորներ, ամբարձիչ կռունկներ, մեկ տոննա և ավելի բեռնաբարձությամբ ամբարձիչ սարքավորումներ և մեխանիզմներ.

3) վերելակներ, եթե դրանք տեղադրված են հանրային նշանակության կառույցներում, այդ թվում՝ արտադրական շինություններում, բազմաբնակարանային շենքերում, ընդհանուր օգտագործման համար նախատեսված այլ վայրերում, բացառությամբ 250 կգ ու փոքր բեռնատարողությամբ վերելակների.

4) նավթամթերքների, հեղուկ գազի, բնական (սեղմված) գազի, հաստատուն և շարժական լցավորման կայաններ, գազազանաանոթային սարքավորումներ, տեխնոլոգիական նպատակներով գազ օգտագործող օբյեկտներ, գազապահեստարաններ.

5) ջրային լողամիջոցներ, բացառությամբ ջրային հեծանիվների և առանց շարժիչի նավակների, այդ թվում՝ փչովի:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված արտադրական վտանգավոր օբյեկտների դասակարգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը «օրենսդրությամբ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տեխնիկական հրահանգներով և անձնագրերով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեխնածին վթարների և արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումն իրականացնում է լիազոր մարմինը»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Տեխնիկական քննություն կարող են իրականացնել Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը և հավատարմագրված անձինք: Տեխնիկական քննություն չի կարող իրականացնել սույն մասում նշված այն կազմակերպությունը, որը տեխնածին վթարին կամ արտադրական դժբախտ դեպքին նախորդող 1 տարվա ընթացքում դրական փորձագիտական եզրակացություն է տվել տվյալ օբյեկտի վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարության նախատեսած առանձին դեպքերում տեխնիկական քննություն իրականացնում է լիազոր մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովը»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տեխնիկական անվտանգության փորձաքննություն կարող են իրականացնել Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հավատարմագրված անձ)»:

2) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Արտադրական վտանգավոր օբյեկտների առանձին խմբերի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել փորձաքննության իրականացման պարբերականության ավելի երկար ժամկետներ:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Տեխնիկական փորձաքննության իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «և դրա արդյունքում լիազոր մարմնին ամփոփ տեղեկատվություն տրամադրելու» բառերը հանել, իսկ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով.

2) 4-րդ, 5-րդ, 8-րդ մասերի «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն», «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը» բառերը համապատասխանաբար փոխարինել «լիազոր մարմին», «լիազոր մարմինը» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը մերժելու մասին տրվում է գրավոր տեղեկանք, որտեղ նշվում են մերժման համար հինք համարվող հանգամանքները՝ հղում կատարելով տեխնիկական անվտանգության ոլորտի իրավական ակտերին և դրանց համապատասխան նորմերին:»:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե նախորդ տարվա ընթացքում արտադրական վտանգավոր օբյեկտում տեղի են ունեցել արտադրական պատահարներ կամ տեխնածին վթարներ, ապա արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը լիազոր մարմին է ներկայացնում սահմանված ձևով տեղեկատվություն՝ իրականացված միջոցառումների և դրանց արդյունքում արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնիկական անվտանգության պահանջների պահպանման և կիրառման վիճակի վերաբերյալ:»:

Հոդված 9. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կարգադրագրով սահմանվում է դրա կատարման ժամկետը, որը կարող է փոփոխվել արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի համապատասխան հիմնավորման դեպքում:»:

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածով նախատեսված կարգադրագրերը լիազոր մարմնի կողմից տրվում են, ինչպես նաև կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացվում են հավատարմագրված անձի կամ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հաստատած փորձագիտական եզրակացության հիման վրա:»:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 17. Լիազոր մարմնի իրավասությունները

1. Լիազոր մարմնի իրավասություններն են՝

ա) տեխնիկական անվտանգության ապահովման պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

բ) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառի պետական ծրագրերի մշակումը և ծրագրերի կատարման ապահովումը.

գ) տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ ներկայացնելը.

դ) համագործակցությունը տեխնիկական անվտանգության բնագավառում միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման այլ մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, արհեստակցական միությունների ընտրովի մարմինների հետ.

ե) հավատարմագրված անձանց, տեխնածին վթարների, մահացու և ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի հաշվառումը, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարումը.

զ) արտադրական վտանգավոր օբյեկտի ռիսկի վերլուծումը և գնահատումը՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման նպատակով.

է) օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացումը համապատասխան առանձնացված ստորաբաժանման միջոցով.

ը) տեխնիկական անվտանգության վկայագրին ներկայացվող պահանջների սահմանումը.

թ) սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության ձևերի սահմանումը.

ժ) սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված կարգադրագրի արձակումը.

ի) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վարչական վարույթի իրականացումը.

իա) աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքների անվտանգության գծով տեսչական և վերահսկողական գործառնություններով օժտված պետական մարմինների կամ այլ կառույցների հետ համագործակցությունը.

իբ) տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում իրավական ակտերի ընդունումը.

իգ) սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը.

իդ) սույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վկայականի ձևի հաստատումը.

իե) կարգադրագրերի ձևերի հաստատումը.

իզ) ռեեստրի ձևի և վարման կարգի, ինչպես նաև հավատարմագրված անձանց հաշվառման կարգի հաստատումը.

իէ) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) «բ», «է», «թ», «ը», «ժա» և «ժգ» կետերն ուժը կորցրած ճանաչել.

- 2) «Ժ» կետի «և հաշվառման» բառերը հանել.
- 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ «Ժդ» կետով.
«Ժդ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «Ժ» և «Ժա» կետերում «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին» բառերը փոխարինել «լիազոր մարմնին» բառերով:

Հոդված 13. Օրենքի 21-րդ հոդվածում՝

- 1) 4-րդ մասի «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին» բառերը փոխարինել «լիազոր մարմնին» բառերով.
- 2) 5-րդ մասի «հոդվածի առաջին մասով» բառերը փոխարինել «հոդվածով» բառով:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Նախագահ	Հանրապետության Ս. Սարգսյան
2011 թ. Երևան ՀՕ-32-Ն	Հունվարի 17